

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՐՈՄԵՏՐ 2017

Հետազոտության համառոտ նկարագրություն

Կովկասյան բարոմետրը (ԿԲ) միջերկրային հետազոտություն է, որն իրականացվում է Հարավային Կովկասի երեք երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Ծրագիրը նպատակամղված է տարածաշրջանում սոցիալական, քաղաքական և տնտեսական գործընթացների վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությանը: Հարցման առաջին ակիքն իրականացվել է 2004թ. երեք երկրների մայրաքաղաքներում: 2006 թվականից հետազոտությունն ընդգրկում է ինչպես մայրաքաղաքներն, այնպես էլ այլ քաղաքային և գյուղական բնակավայրերը¹: 2015թ. և 2017թ. Կովկասյան բարոմետրն իրականացվել է միայն Հայաստանում և Վրաստանում:

Հարցման գործիքակազմ

Հարցման համար օգտագործվող հարցաթերթը կազմվում է Հարավային Կովկասի երեք երկրները ներկայացանող որակավորված հետազոտողների կողմից:

Հիմնական հարցաթերթը պարունակում է Հարավային Կովկասի երկրներում ժողովրդագրական, սոցիալական, քաղաքական և տնտեսական զարգացումների վերաբերյալ ավելի քան 100 հարց՝ ինչպես անհատական, այնպես էլ տնային տնտեսությունների մակարդակով: Թեև հիմնական հարցաթերթը մնում է անփոփոխ, սակայն այս երկրներում տեղի ունեցող սոցիալական, քաղաքական և տնտեսական վերջին զարգացումները հասկանալու նպատակով տարեցտարի նոր հարցեր են ավելացվում: Օրինակ՝ 2017թ. հարցաթերթում ընդգրկվել են հարցեր սիրիահայերի ներհոսքի, 2016թ. ապրիլյան պատերազմի, «Սասնա ծռերի» և այլ արդի հիմնախնդիրների վերաբերյալ:

Հարցման մեթոդաբանություն

Ինչպես նախորդ տարիներին, ԿԲ 2017թ. համար ևս կիրառվել է բազմաստիճան կլաստերային ընտրանք՝ ընդգրկելով Հայաստանի և Վրաստանի չափահաս բնակչությունը: Յուրաքանչյուր երկրի սահմաններում տարանջատվել են մայրաքաղաքային, քաղաքային և գյուղային մակրոտարածանքներ՝ բաժանելով յուրաքանչյուրը հյուսիսարևելյան, հյուսիսարևմտյան, հարավարևելյան և հարավարևմտյան աշխարհագրական տարածաշրջանների: Ընտրանքի առաջին փուլում յուրաքանչյուր ստրատայում պատահականորեն ընտրվել են ընտրատեղամասեր՝ վերջիններիս չափի համամասնության սկզբունքով: Երկրորդ փուլում թիրախային տնային տնտեսությունների թիվը որոշվել է պատահական սկզբնակետով: Վերջին երրորդ փուլում, հարցվողների ընտրության համար կիրառվել է Քիշի աղյուսակը: 2017թ. դեմ առ դեմ հարցազրույցներին մասնակցել է 4027 հարցվող (Հայաստանում՝ 1648, Վրաստանում՝ 2379):

Տվյալների հասանելիություն

Հարցաթերթը, ցուցադրաքարտերը, ընտրանքի մեթոդաբանության մանրամասն նկարագրությունը, տվյալների շտեմարանը (SPSS և STATA ֆորմատներով) և որոշ արդյունքներ կարող եք գտնել Կովկասյան Բարոմետրի² և ՀՌԿԿ-Հայաստանի³ պաշտոնական կայքերում:

ՀՌԿԿ-Հայաստան իր գործունեությունն սկսել է 2003թ.՝ որպես Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում հիմնված Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների ցանցի մի մաս: Այն երկար տարիներ գործել է Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի ծանրակշիռ աջակցությամբ: 2013թ. հուլիսից ՀՌԿԿ-Հայաստանը հանդիսանում է անկախ հիմնադրամ, որը շարունակում է սատարել հասարակագիտական հետազոտություններն ու հանրային քաղաքականության վերլուծությունը խթանելու հիմնական նպատակով:

Հասցե՝ Երևան 0025, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ գրադարանի մ/շ, 6-րդ հարկ, 602 սենյակ:
Հեռ.՝ +374 10 57 48 68
+374 10 57 48 98
Էլ. փոստ՝ crcc@crcc.am
Կայք՝ www.crcc.am

¹ Հարցումներ չեն անցկացվել Լեռնային Ղարաբաղում, Նախիջևանում, Աբխազիայում և Հարավային Օսիայում:

² www.caucasusbarometer.org

³ <http://www.crcc.am/research-and-surveys/caucasusbarometer/documentation>